Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 394 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ և ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՔՆԵՐԻ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման նախագծային աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագիրը կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Եկեղեցական առաքելություն
6.	Ծրագրի բյուջեն	11,968,289 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01 նոյեմբեր, 2018 թ. - 30 մայիս, 2020 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման նախագծային աշխատանքներ, որի գումարը կազմում է 11,968,289 դրամ: Աշխատանքներն իրականացվելու են «Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ-ի կողմից, (ՀՎՀՀ՝ 02265634), պայմանագիր N 02Ն/018՝ կնքված, 2018 թ. օգոստոսի 31-ին: Նախատեսվում է ծրագիրը իրականացնել 01 նոյեմբեր, 2018 թ.- 30 մայիս, 2020 թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների ամրակայման և վերականգման նախագծային աշխատանքներ: Աշխատամքների գումարը կազմում է 11,968,289 դրամ: Նախատեսվում է աշխատանքները իրականացնել 01 նոյեմբեր, 2018 թ.- 30 մայիս, 2020 թ.
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ